

խոտ , շաքար , տեսակ տեսակ կենդանեաց կաշիներ : Բամբակի մշակութիւնը սկսած է 1775ին , ու 1803ին չորս բամբակի գործարան կար միայն , իսկ այսօրուան օրս բոլոր աշխարհիս երեսը եղած բամբակեղէններուն կէսը Սիւրիացեալ նահանգաց գործարաններէն ելած են : Երբին վաճառակա նութիւնը շատ առաջ գացած է երկրին մէջի եղած անբաւ ջրանցքներուն պատճառաւ որ ընդ ամէնը 7000 հազարամէդրը կ'անցնին : Եւ ջրանցքներուն մէջ գլխաւորներն են , () հիոյի ջրանցքը որ 487 հազարամէդր է , որով Լարիէյի լիճը () հիոյ գետին հետ կը միանայ (ընդ մէջ Վլաւլանտ և Բորդրումուտ քաղաքներուն) : Սիւրիացեալ ջրանցքն որ 287 հազարամէդր է նոյնպէս նոյն գետն և նոյն լիճն իրարու հետ միացրնելու համար : Սպարտակ-և-Լարիէի ըսուած ջրանցքը (302 հիւմ.) աս երկու տեղերը իրարու հետ կը միացնէ : Բենսիւլանիայի ջրանցքն որ 1100 հիւմէդր է , ընդ մէջ Բեդասպուրկի՝ որ նոյնպէս () հիոյ գետին վրան է և Գոլումպիայի ու Սիւրիացեալի եղերը շինուած է . և դարձեալ Էդգաբէքի ջրանցքը որ 530 հազարամէդր է . ասոնցմէ դուրս դեռ ուրիշ շատ ջրանցքներ կան որոնցմով լիճ մը ուրիշ լիճ կը հաղորդուի կամ լիճ մը գետի՝ որով ամէնքն ալ ծովու հետ հաղորդակցութիւն ունենալով վաճառաց փոխադրութիւնը մեծապէս կը դիւրացնեն : Ջրանցքներէն դուրս ամէն կողմ յաճախած են երկաթուղիները՝ որոնք նոյնպէս վաճառականութեան զարգանալուն մեծապէս կ'օգնեն : 6692 հասարակ արքունական (կամ թղթատար) ճամբայ կայ , որոնց ամենուն ամբողջական երկայնութիւնը 290,324 հազարամէդր է :

Վաւարկութեան արհեստն ալ խիստ շատ ծաղկած է Սիւրիացեալ նահանգաց մէջ՝ որոնք առաջինը կը սեպուին յետ Բնագիւղացոց : Խիստ շատ վաճառք դուրս կը խաւրեն որոնց մէկ մասը տեղացի բնիկ եղած ցեղերուն հետ փոփոխութիւն ընելով կ'ըլայ : Իսկ դուրս

գացած բերքերն են բամբակ , եգիպտացորեան , ցորեան , ծխախոտ , նաւափայտ , բողաս , աղած միս , կաշի , ձեռակերտներ , բամբակի լաթեղէններ , վառօդ , զէնք , գլխարկ , տեսակ տեսակ գրքեր , և այլն և այլն : Իսկ իրենք դրսէն կ'ընդունին ընդհանրապէս , գինի , օղի , աղ , և չոր պտուղներ և այլն : 1858ին 282,613,150 տողարի վաճառք ընդունել էին դրսէն , և դուրս խաւրեր էին 324,644,421 տողարի ապրանք :

Սալցպոռի Աղանակք :

(Տես երես 29)

Բնկերներս ու ես երկու պահապաններով մտանք այն դռնէն ներս երկայն ճամբու մը մէջ որ բոլոր աղահանքին վարէն 'ի վեր սեպելով հինգերորդ յարկն է :

— Սրչափ ատեն պիտի քչէ այս մեր ճամբորդութիւնը , հարցուցինք մեր առաջնորդին :

— Բնէնէն կարճ ու համառօտը իրեք ժամ , պատասխանեց , ամենէն երկայնն ալ ութը օր :

— Բնչպէս . . . ութը օր . կրկնեցինք ամէնքնիս միատեղ զարմանալով .

— Հրամմեր էք , պատասխանեց նորէն ծանրութեամբ մը մեր առաջնորդը . շաբաթ մը հաղիւ կը բաւէ լերան այս կողմը միայն պտրտիլը . առանց հաշուելու լերան միւս կողմն ալ որ Վաւիերայի մաս կը սեպուի :

Եւս առաջին ճամբուս անունն է Ֆրայդէնպէրկ այսինքն Վաւիերայի Բեն . երկայնութիւնն է 800 մէդր . շատ տեղ տախտակներով ու ցիցերով ամրացած որ չփլչի . լայնութիւնն ալ գրեթէ երեք մէդր . գետինն ալ երկու կարգ երկաթէ ճամբայ շինած է որուն վրայէն դիւրութեամբ աղով կամ ուրիշ բանով բեռնաւորեալ կառքերը կ'անցրնեն : Տեղ տեղ ալ ճամբուն եզերքները պատին մէջ մէկ կամ երկու մէդր եր-

կայնութեամբ և երեք մէքր լայնութեամբ միջոց մը փորած են, որպէս զի եթէ դիմացէ դիմաց կառքեր պատահելու ըլլան՝ մէկը կարենայ այս ծակերուն մէջ մտնալով՝ մէկայլին ճամբայ տալ :

Կէս ժամու չափ քչեց այս ճամբան . պահապանաց ծանր ու լուրջ կերպարանքը և առջևնին նայելով քալուածքը, մեր ձեռքի ճրագներուն պատերուն վրայ ձգած ազօտ լոյսը, և բոլոր այն մթութիւնը աննկարագրելի տպաւորութիւն մը կ'ընէ մարդուս վրայ, ու առանց վախի իրական պատճառ մը ըլլալու մարդուս վրայ սոսկում մը կու գայ :

Պահապանները հազիւ թէ մեր մէկ երկու հարցմանց պաղ ու համառօտ պատասխան մը կու տային . նման արէկօծութենէ բռնուող նաւու մը ղեկավարին որ իր նաւուն ուղղութենէն ուրիշ բանի միտք չգնէր : Սէյ մ' ալ յանկարծ դիմացէն գացող առաջնորդը կանկ առաւ . ու մատով ծակ մը ցրցուց պատին վրայ գետնին հաւասար, որուն յատակը անկարելի էր տեսնալը : Ես ծակս 45 աստիճան ծռութեամբ զառ'ի վայր հոր մըն էր . այս զառ'ի վայրին վրայ հաստատած են երկու հաստ ողորկ ու սահուն գլաններ մէկմէկէ 30 հարիւրորդամէքր հեռաւորութեամբ . աջ կողմն ալ հաստ չուան մը հաստատած :

— Ինչ որ ես կ'ընեմ, դուք ալ նոյնը ըրէք, ըսաւ առաջնորդը, ու երկու սրունքները գլաններուն վրայ երկընցընելով, կաշիէ ձեւնոյսփն ալ չուանը բռնեց, ու

— Իարի ճամբայ, պողաց երեսներն էս վեր :

— Սըր պիտի երթանք, հարցուցինք իրեն :

— Ի դժոխս, պատասխանեց ասելի ձայնով մը, ու յանկարծ աներևոյթ եղաւ, քանի մը մանրերորդ ալ գեռ ետևէն ճրագին աղօտ լոյսը նշմարեցինք, բայց այն ալ անդունդին մէջ կորսուեցաւ :

Ը խտակը մեծ սոսկում մը վրաս է .

կաւ, ու չէի համարձակեր այդ դժոխոց մուտքը ես ալ բռնադատելու . և եթէ ընկերներս չըլլային՝ թերևս բուրովին ետ կենայի այդ ձեռնարկութենէն : Ինկերներէս ծաղը ըլլալու ամօթէս սիրտ ըրի, բռնադատեցի ինքզինքս ու ես ալ գլաններուն վրայ նստայ . — այն ատեն իմացայ թէ մէջքերն էս կախած կաշին ինչ բանի պիտի ծառայէր . — բռնեցի պատին չուանը ու աչուրներս գոցած՝ բաղդին ձեռքն ինքզինքս յանձնեցի ու ձգեցի ինքզինքս : Երանը սաստիկ սխմած ըլլալովս՝ սկզբան կամաց կամաց կ'իջնայի, բայց ձեռքս յոգնեցաւ թուլցաւ ու յանկարծ այնպիսի արագութեամբ մը վար սահեցայ՝ որ և ոչ իսկ ժամանակ ունեցայ զգացածս անդրադառնալու . մէյ մ' ալ ոտքս պինդ բանի մը դիպաւ ու ոտքի վրայ մնացի . դիմացս կեցեր էր ինձմէ առաջ անցնող առաջնորդնիս, որ պաղ ձեռուրները ուսիս վրայ դրաւ :

— Սըր ենք, հարցուցի սոսկալով .

— Սեր առաջի կեցած Ֆրայդէնպերկի յարկին 110 մէքր խորութեանը տակը :

Ես երկրորդ յարկը առջինէն աւելի ընդարձակ է . վերին յարկին ու բուր աղահանքին նման պատերը զանազան ու գոյնզգոյն աղերով պատած է, տեղ տեղ կարմիր, տեղ տեղ ձերմակ, խիստ քիչ ալ բիւրեղաձև . ընդհանրապէս հողով խառնած է այս աղս, անոր համար Ս իլիքբայի և ուրիշ քանի մը աղահանքաց պէս խոշոր կտոր չըլլար, որոնց որ մեք արևելցիքս տաճկի բառով քայեա Խուպու կ'ըսենք, որովհետև ժայռի կտորուանքներու պէս մաս մաս առուտուրի մէջ կ'անցնի : Իսկ այս աղահանքին մէջ աղը հողէն բաժնելու համար, պատերուն մէջ լայն աւազաններ բացած են, որոնց մէջ մասնաւոր ճամբաներով լերան վրայէն ինկած ջրերը կը լեցընեն ու չորս կողմէն գոցելով՝ վեց եօթը շաբաթ կը ձգեն որ ջուրը իր թացութեամբը ձեղուան հողը քայքայէ ու վար թափի . հողին աղը ջրին հետ կը խառնուի ու հողը ջրին տակը

կ'իջնայ : Ըստ կերպով մէյմը բացուած աւազանին ձեղունը երթալով կը բարձրանայ , բայց որովհետև ինկած հողն ալ աւազանին յատակը կը բարձրացնէ՝ անով միշտ աւազանները աստիճանով բարձրանալու վրայ են , անով է որ դարերէ 'ի վեր այն ահագին յարկերը ձևացած են : Ընկալանին ջրերը վեց եօթը շաբթուան մէջ կը յագեցնան (saturé) , այն ատեն մասնաւոր խողովակները որ աւազաններուն հաղորդուած են , կը բանան ու այն աղաջուրը լեռնէն վար քաղաք կ'ինջեցնեն , ու հոն մեծ կաթսաներուն մէջ կը վազցնեն ու տաքցնելով՝ ջուրը կ'անգայտանայ ու աղը կաթսային մէջ կը բերեղանայ բարակ փոշիի պէս , այս աղը կը ժողուեն ու կաղպարներով կը թափեն շաքարի գլուխներու (քէլէ) պէս ու Սալցպուրկ մեծ ամբարանոցը կը կրեն :

Երկրորդ յարկէն ուրիշ վերոյիշեալ ծակ ճամբով մը որ Յակոբայ սանդուխք կ'ըսուի՝ երրորդ յարկ մը կը մտնուի , ուր աղի լիճ մը կայ 20 մէդրէն աւելի տրամագծով գրեթէ բոլորակաձև , չորս կողմը կանթեղներով լուսաւորուած . նաւակով մը անցանք այս լճէն , որուն մէկ կողմէն մէկալը չուաններով նաւակը կը քաշեն : Լճէն անդին դեռ երկու ծակ ալ ինջնալու է աւելի պզտիկ . մէկը 23 մէդր , զորն որ գլանք թագաւորի (köningssrolle) կ'անուանեն . երկրորդն ալ 38 մէդր : Ըստ վերջին յարկին մէջ պատին մէջ փորած պզտիկ խուց մը կայ ուր որ աղահանքէն ելած աղերուն ամէն տեսակէն աղուօր կտորուանքները շարած են . կան նաև քանի մը հռովմայեցւոց ատենէն մնացեալ գործիքներ 1825ին գտնուած . սուրբ Հոբերտոսի արձանը , որովհետև այս սուրբս է առջին եպիսկոպոս Սալցպուրկի , և 'ի պատիւ՝ այս յարկին անունը Սուբերդրսպերկ դրած են : Ըսկէ ալ 162 մէդր խոր կ'ինջեցուի Փուֆ-Տիտրիխպերկ գետնափոր ճամբան , որուն երկայնութիւնն է 2612 մէդր , 2000 մէդրը կարծր քարի մէջ փորուած . 44 տարի (1506-1550) աշխատած են այս ճամբան բանալու համար . քարերուն կարծրութենէն յուսահատեր են աշխատաւորք , մէջերնէն Տիտրիխտ անունով մէկը բանիւ և գործով քաջալերեր է իր ընկերները ու անով այս ահագին գործը գլուխ հաներ են , որն որ աղահանքին ամենէն զարմանալի բաներուն մէկն է . և այս մարդու անունովը Տիտրիխտպերկ ըսուեր է : Ըստ գետնափորին մէջ ալ հինգերորդ յարկին նման գետնին վրայ երկթէ ճամբայ կայ , որուն վրայ չորս ցած անիւներով կառքեր կան երկայն գերանէ մը միայն ձևացած , որուն վրայ ձիու պէս հեծնալու է (wurstwagen) : Պահապանները սաստիկ ապրսպրեցին որ գլուխնիս չարժենք ու շիտակ կենանք , ապա թէ կառքին արագութեամբ երթալու ատեն , թէ որ գլուխնիս կամ ոտուրնիս պատին հանդիպելու ըլլայ՝ փնասուելու վտանգի մէջ կ'իյնայինք :

Ըստ մթութեան մը մէջ կառքը սաստիկ արագութեամբ առաջ սկսաւ քալել , շարժողներն երկու զօրաւոր մարդիկներ էին , որոնք մէկն առջևէն մէկը ետևէն կառքը առաջ կը տանէին : Երբ մը ժամանակ առաջ երթալէն վերջը՝ հեռուանց դիմացնիս լուսաւոր աստղի պէս կէտ մը տեսանք , որ երթալով մեծցաւ : Ընկալանքէն դուրս ելլալու դուռն էր , մտած տեղերնէս 400 մէդր լեռնէն վար , ուր վերէն դրսի ճամբով մը մեր զգեստները բերեր էին . հոն փոխեցինք մեր զգեստները , հանեցինք ձերմակ տափատը ու բաճկոնը , հագանք նորէն մեր վերարկուները , ու լի զարմացմամբ ինջանք լեռնէն վար :

Երրոպայի բնակչաց աճումը :

Ինչպէս որ յայտնի է ամուսնութեանց թիւն աւելի շատ է խաղաղութեան ժամանակ քան թէ պատերազմի ատեն , և որչափ առաւելու պատերազմի հաւանականութիւնն այնչափ կը նուազին ամուսնութիւնք : Յամին 1823 Պաղ-